ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N 21 գ. Արենի ☎(0281) 60-001

«24» Մայիս 2012թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Արենիի համայնքի ավագանու 24.05.2012թ. թիվ 5 նիստի օրակարգը՝

1. Ավագանու նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Արենիի համայնքի 2012թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:
3. Արենիի համայնքի զարգացման ծրագրերը հաստատելու մասին:

կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 :

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Ա. Ասատրյան	----------	----------	----------
2. Ռ. Խաչատրյան	----------	----------	----------
3. Հ.Նազարյան	----------	----------	----------
4.Թ. Պետրոսյան	----------	----------	----------
5.Է. Սիմոնյան	----------	----------	----------

Արենիի համայնքի ղեկավար՝ Ժ.Եղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N 22 գ. Արենի ☎(0281) 60-001

«24» Մայիս 2012թ.

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն համայնքի 2012 թ. տարեկան բյուջեի վարչական մասի՝
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր ոլորտի 11 բաժնի, 01 խմբի, 01 դասի 4891՝ պահուստային միջոցներ հոդվածի գումարներից պակասեցնել՝ 300.000 /երեք հարյուր հազար/ դրամ և համապատասխանաբար այն ուղղել շինարարություն ոլորտի 06 բաժնի, 01 խմբի, 01 դասի 4622՝ կապիտալ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին հոդվածին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 :

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Ա. Ասատրյան	----------	----------	----------
2. Ռ. Խաչատրյան	----------	----------	----------
3. Հ.Նազարյան	----------	----------	----------
4.Թ. Պետրոսյան	----------	----------	----------
5.Է. Սիմոնյան	----------	----------	----------

Արենիի համայնքի ղեկավար Ժ.Եղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԱՐԵՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

N 23 գ. Արենի ☎(0281) 60-001

«24» Մայիս 2012թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՐԵՆԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2012-2022 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով Արենիի համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Հաստատել Արենիի համայնքի 2012-2022թթ. զարգացման երկարաժամկետ ռազմավարության ծրագիրը:

կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 :

Ավագանու անդամներ՝	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1. Ա. Ասատրյան	----------	----------	----------
2. Ռ. Խաչատրյան	----------	----------	----------
3. Հ.Նազարյան	----------	----------	----------
4.Թ. Պետրոսյան	----------	----------	----------
5.Է. Սիմոնյան	----------	----------	----------

Արենիի համայնքի ղեկավար՝ Ժ.Եղյան

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

2012-2022 թթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ

Արենին հարուստ պատմամշակութային ժառանգությամբ, գեղատեսիլ բնությամբ, խաղողագործության և գինեգործության հարուստ ավանդույթներով և հյուրընկալ ժողովրդով համայնք է: Համայնքն ունի զարգացման ահռելի, դեռևս չօգտագործված ներուժ: Զարգացման արդյունավետ պլանավորման դեպքում համայնքն ունի հանրապետությունում և տարածաշրջանում գինեգործության և զբոսաշրջության առաջատար կենտրոն դառնալու հեռանկար: Համայնքում և դրա շրջակայքում առկա զբոսաշրջային ռեսուրսները, զբոսաշրջային գրավչության օբյեկտները, գինեգործության հազարամյա ավանդույթները և համայնքի բնակիչների ավանդական հյուրընկալությունն ու հյուրասիրությունը անփոխարինելի գրավականն են համայնքի հետագա զարգացման և բարգավաճման:

Սույն ռազմավարությունը մշակվել է վերոնշյալ ռեսուրսների հիման վրա համայնքի զարգացման ճանապարհը հստակեցնելու նպատակով: Այն ներկայացնում է համայնքի զարգացման տեսլականը, վեր է հանում առկա հիմնական խնդիրները և առաջարկում դրանց լուծմանն ուղված միջոցառումների ծրագրեր՝ զարգացման երեք ուղղություններով:

Միջոցառումների ծրագրերում զգալի տեղ է հատկացվել համայնքի ներկայացուցիչների միջև համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանը, իսկ ողջ ռազմավարության իրականացման հաջողությունն առաջին հերթին պայմանավորված է համայնքի ներկայացուցիչների և տեղական ինքնակառավարման մարմնի միջև սերտ և արդյունավետ համագործակցությամբ:

> ...համայնքն ունի հանրապետությունում և տարածաշրջանում գինեգործության և զբոսաշրջության առաջատար կենտրոն դառնալու հեռանկար...

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ	1
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	3
Աշխարհագրական դիրք, կլիմա, պատմական ակնարկ	3
Ժողովրդագրություն, սոցիալ-տնտեսական վիճակ և ենթակառուցվածքներ	4
Տեղական ինքնակառավարում	6
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ	7
Տեսլականը	7
Նպատակը	7
SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	8
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ	12
Զբոսաշրջության զարգացման ծրագիր	12
Գինեգործության զարգացման ծրագիր	19
Զբոսաշրջային տների զարգացման ծրագիր	24

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աշխարհագրական դիրք, կլիմա, պատմական ակնարկ

Արենի գյուղը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝ Արփա գետի ստորին հոսանքի երկու կողմերում, մայրաքաղաքից 110 կմ, իսկ մարզկենտրոն Եղեգնաձորից՝ 20 կմ հեռավորության վրա: Համայնքի աշխարհագրական կոորդինատներն են 39° 43' 09" հս. լ. 045° 10' 48" ավ. ե.

Բնակավայրի տարածքը հիմնականում ընկած է Արփա գետի հովտի լայնացած մասում և Երևան-Մեղրի ավտոմայրուղու երկարությամբ զարգանում է դեպի հյուսիս և արևելք: Գյուղի եզրերը աստիճանաբար ընդլայնվել են դեպի գետահովտի զառիթափ լանջերը:

Բնակավայրը գտնվում է ծովի մակարդակից 980 մ բարձրության վրա: Կլիման ցամաքային է, սակայն գրեթե ամբողջ հողատարածքը ոռոգվում է գետի ջրով: Ձմեռը չափավոր ցուրտ է, ոչ երկարատև, գարունը տաք է, երկարատև, խոնավ, ամառը շոգ, չոր, երկարատև է, գերակշռում են կայուն պարզ եղանակները, աշունը երկարատև է գերակշռում են տաք, քիչ ամպամած օրերը:

Արենին Վայոց Ձորի հին և նշանավոր գյուղերից է, ճանապարհային հանգույց և Շարուրի դաշտավայրից Վայոց Ձոր մտնող կիրճը փակող ռազմական կետ: Պատմական Սյունիքի մարզի հինավուրց Արենի գյուղը գտնվել է ներկայիս համայնքից կես կմ հյուսիս, բլրի վրա, որտեղ մինչ օրս կանգուն է Մոմիկ ճարտարապետի կողմից 1321 թ. կառուցված ս.Աստվածածին վեհաշուք եկեղեցին: Համայնքի վարչական տարածքում է գտնվում նաև Նորավանքի վանական համալիրը: Գյուղի տարածքում կան հնավայրեր, մի քանի ավերված գյուղատեղիներ, բազմաթիվ խաչքարեր արձանագրություններով ու հոյակապ քարայրներ՝ Մագելի և Թռչունների քարանձավները: Թռչունների (Արենի 1) քարանձավում 2010թ. գտնվել աշխարհի ամենահին կոշիկը, կանացի հագուստը և գինու հնձանը:

Գյուղը, որ նախկինում կոչվում էր Արփա վերանվանվել է ՀՍՍՀ Գերագույն սովետի 1946թ. N10/9 հրամանագրով:

Ժողովրդագրություն, սոցիալ-տնտեսական վիճակ և ենթակառուցվածքներ

2011 թվականի դրությամբ համայնքը ունի 543 տնային տնտեսություն, 2006 բնակիչ: Ստորև բերվում է համայնքի ժողովրդագրական նկարագիրը:

(մարդ)

Բնակչություն	2006
այդ թվում՝	
տղամարդիկ	1023
կանայք	983
Զբաղվածություն	
Զբաղված բնակիչներ	1016
այդ թվում՝	
գյուղատնտեսության բնագավառում	795
այլ բնագավառներում	221

Համայնքի վարչական տարածքը գրաղեցնում է 4336 հա տարածություն: Ստորև ներկայացվում է համայնքի վարչական տարածքում գտնվող հողերի բնութագիրն ըստ նշանակության:

(հա)

Վարչական տարածքը	4336
որից՝	
տնամերձ	100
գյուղատնտեսական նշանակության	204
որից՝	
խաղողի այգիներ	150

Արենի համայնքում կանաչ տարածքների մակերեսը կազմում է 40.5 հա , հատուկ նշանակությանտարածքները՝ 2.3 հա:

Համայնքում գործում է 19 առևտրային կազմակերպություն: Կազմակերպությունների նկարագիրն ըստ բնագավառների ներկայացվում է ստորև:

	(հատ)
Գործող կազմակերպություններ	19
այդ թվում՝	
խանութներ	12
դեղատուն	1
բենզալցակայան	1
ռեստորաններ	2
հանրային սննդի այլ օբյեկտներ	6
գինեգործարաններ	2
քարի արդյունահանման արտադրամաս	1
քարամշակման արտադրամաս	1
կահույքի արտադրամաս	1
ընդհանուր առևտրային մակերեսը (ք/մ)	860

Ստորև ներկայացված է 2010թ. Արենի համայնքի տեղական հարկերի և տուրքերի չափերը (2010թ.)

	(հազար ՀՀ դրամ)
Հողի հարկ	2331.1
Գույքահարկ	2100.0
Հողի վարձավճար	650.0
Տեղական տուրքեր	600.0

Հանրային ենթակառուցվածքները Արենի համայնքում ներկայումս գտնվում են հիմնականում բավարար վիճակում: Արենի համայնքը ամբողջությամբ էլեկտրաֆիկացված է, ապահովված է ինտերնետային կապով, հեռախոսակապով, տրանսպորտային ցանցով, խմելու ջրով և ոռոգման ջրագծերով: Համայնքը մայրաքաղաքին և մարզկենտրոնին կապող Երևան-Մեղրի մայրուղին լավ վիճակում է, իսկ համայնքային և հանդամիջյանները՝ բավարար և անբավարար:

Գյուղում կա 1 միջնակարգ դպրոց, որտեղ 2011-2012 ուսումնական տարում սովորում է 220 աշակերտ: Գյուղում կա նաև մեկ բուժամբուլատորիա և մեկ մշակույթի կենտրոն:

Արենի համայնքում աղբահեռացումը կատարվում է կենտրոնացված եղանակով՝ հատուկ մասնագիտացված "Արենի" համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից: Կենցաղային աղբը տեղափոխվում է աղբաթափման վայր, որը բնակավայրից գտնվում է սանիտարական նորմերով սահմանված հեռավորության վրա և զբաղեցնում է 0.8 հա տարածք: Աղբավայրում աղբը չի տեսակավորվում և տարվա ընթացքում մի քանի անգամ ծածկվում է հողի շերտով:

Արենի գյուղը մարզում և հանրապետությունում հայտնի է նաև սպորտի բնագավառում ունեցած հաջողություններով: 2010թ.-ին "Լավագույն գյուղական մարզական համայնք" հանրապետական ատուգատեսում համայնքը գրավել է պատվավոր 3-րդ տեղը: Գյուղում կառուցվում է մարզադահլիճ, որը կշահագործվի 2012թ.: Գյուղում կա ֆուտբոլի դաշտ, իսկ դպրոցի մարզադահլիճը վերջերս է վերանորոգվել:

Տեղական ինքնակառավարում



ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Տեսլականը

Արենի համայնքը՝ զինեգործության հազարամյա ավանդույթներով հայտնի, նյութական և ոչ նյութական մշակութային արժեքներով հարուստ, զարգացած զբոսաշրջային տնտեսությամբ և գյուղատնտեսությամբ բարգավաճող համայնք, որի յուրաքանչյուր անդամ հստակ տեսնում է իր սոցիալական ապահովվածությունը, արժանապատիվ դիրքն ու պատասխանատվությունը ողջ համայնքի նկատմամբ՝ ի նպաստ համայնքի բարօրության:

Նպատակը

Սույն ռազմավարության հիմնական նպատակն է զարգացնել Արենի համայնքը որպես զինենգործության հազարամյա ազգային ավանդույթների պահպանման և զարգացման կենտրոն, պատմական, մշակութային և բնական զբոսաշրջային ռեսուրսներով հարուստ, տարվա բոլոր եղանակներին գործող ակտիվ զբոսաշրջային կենտրոն՝ գինու, գյուղական, պատմամշակութային, էկո և արկածային զբոսաշրջության ձևերի համար:

> ...բարգավաճող համայնք, որի յուրաքանչյուր անդամ հստակ տեսնում է իր սոցիալական ապահովվածությունը, արժանապատիվ դիրքն ու պատասխանատվությունը ողջ համայնքի նկատմամբ...

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն վերլուծությունը ներկայացնում է համայքում առկա ենթակառուցվածքների, ռեսուրսների, տնտեսական և սոցիալական տարբեր ոլորտների ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու ռիսկերը: Այն նպատակ է հետապնդում վերհանել առկա հիմնական խնդիրներն ու գնահատել համայնքի զարգացման հնարավորություններն ու ուղղությունները:

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Գինեգործություն և խաղողագործություն	• Խաղողագործության զարգացած ավանդույթներ, • Խաղողագործության համար բարենպաստ կլիմա, • խաղողի այգիների առատություն, • հազարամյակների պատմությամբ գինեգործության ավանդույթներ, • գինեգործությամբ հայտնի համայնք, • համայնքի անվան և միջազգային շուկայում հայտնի հայկական «Արենի» գինու անվան նույնություն	• Խաղողի այգիների սակավ գրավչություն, • տնական արտադրության գինու փաթեթավորման ցածր որակ, • տնական գինու վաճառքի վատ պայմաններ	• Գինեգործության զարգացում • խաղողի և գինու զբոսաշրջության զարգացման հիանալի նախադրյալներ, • գինու տնական արտադրության և իրացման ծավալների ընդլայնում • խաղողագործության և գինեգործության թանգարանի հիմնում,	• Արենի բրենդի արդիականության պահպանում, մարզում, հանրապետությունում և տարածաշրջանում ուժեղ մրցակցություն
Ժամանց	• Ավանդական գինու փառատոն՝ տարածաշրջանային համբավով, • մշակութային նյութական և ոչ նյութական հարուստ ժառանգություն	• Այցելուների և զբոսաշրջիկների ժամանցի համար գրավիչ միջոցառումների բացակայություն • ժամանցի վայրերի բացակայություն	• Գրավիչ միջոցառումների (երեկոյան անիմացիոն ծրագրեր, մշակութային միջոցառումներ, կիրակնօրյա տոնավաճառներ, փառատոներ, ցուցահանդեսներ) կազմակերպում, • Երիտասարդների և զբոսաշրջիկների համար մշակութային և սպորտային ժամանցի վայրերի ստեղծում	• Ժամանցային միջոցառումների և վայրերի պակասը խոչընդոտ կհանդիսանա երիտասարդ զբոսաշրջային հոսքերի ներգրավմանը

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Զբոսաշրջային ծառայություններ	• 6 հանրային սննդի կազմակերպման օբյեկտներ • 2 ռեստորան • հյուրընկալ ժողովուրդ	• Զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնի բացակայություն • զբոսաշրջային տեղեկատվության, այդ թվում նաև տպագիր նյութերի, պակաս • Որակյալ ուղեկցորդների պակաս • սպասարկման ոլորտում օտար լեզվի իմացությամբ որակյալ կադրերի պակաս • Սննդի կազմակերպման օբյեկտների ցածր որակ, սահմանափակ քանակ և հնարավորություններ • Զբոսաշրջային տներում և սննդի կազմակերպման օբյեկտներում սպասարկման անբավարար որակ, օտար լեզվի իմացության ցածր մակարդակ	• Զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնի հիմնում • Զբոսաշրջիկներին տրամադրվող տեղեկատվության ընդլայնում • Սպասարկման ոլորտի մասնագետների պատրաստում և վերապատրաստում • Սննդի կազմակերպման օբյեկտներում և հյուրանոցային տնտեսության օբյեկտներում պայմանների և սպասարկման որակի բարելավվում • առաջարկվող զբոսաշրջային ծառայությունների տեսականու ընդլայնում • Սննդի կազմակերպման օբյեկտներում սննդակարգի բարելավում, ավանդական ուտեստների ցանկի ընդլայնում	• ծառայությունների սակավությունը և սպասարկման ցածր որակը բացասաբար կանդրադառնան գյուղի՝ որպես գրավիչ զբոսաշրջային ուղղության նկարագրի վրա • մարզում և համայնքում ծառայությունների և սպասարկման ոլորտում ուժեղ մրցակցություն

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Բնական և գյուղական միջավայր	• Գեղատեսիլ բնություն, • Հանգիստի կազմակերպման համար բարենպաստ և գրավիչ մթնոլորտ • Էկոլոգիապես մաքուր օդ • Հյուրընկալ ժողովուրդ	• Ավանդական գյուղական և պատմա-ճարտարապետական միջավայրի աղավաղում, • համայնքի փողոցներում, պատմա-մշակութային և բնական գրավչության օբյեկտներում մաքրության ցածր մակարդակ, • Օրվա մութ ժամերին փողոցներում լուսավորության պակաս	• Համայնքի կենտրոնական և ամենագեղատեսիլ մասերում ավանդական գյուղական գրավիչ միջավայրի վերականգնում • Կանաչապատ տարածքների ստեղծում	• Բնական և գյուղական միջավայրի մատնումն անուշադրության և դրանցում առկա ռեսուրսների անկազմակերպ օգտագործումը տեղաբնակների և այցելուների կողմից լրջորեն կխոչընդոտի համայնքի կայուն զարգացմանը:
Ենթակառուցվածքներ, հանրային ծառայություններ	• Համայնքով անցնող Երևան – Մեղրի հանրապետական մայրուղի, որը գնտվում է լավ վիճակում • Էլեկտրաֆիկացիա համայնքի ողջ տարածքում • Ռոզման համակարգ • Ինտերնետ կապի և հեռախոսակապի առկայություն • գործող բուժ. ամբուլատորիա • Աղբահանության գործող համակարգ	• Բնական գազի բացակայություն • Կոյուղու բացակայություն • միջհամայնքային և հանդամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակ • Բանկոմատների բացակայություն • Հանրային զուգարանների բացակայություն • Աղբամանների բացակայություն	• Գազաֆիկացում • Կոյուղու համակարգի կառուցում և ընդլայնում • Հեռահաղորդակցության համակարգերի զարգացում և ընդլայնում, բանկոմատների գործարկում • Համայնքի կենտրոնական և զբոսաշրջության տեսանկյունից առավել գրավիչ հատվածներում հանրային զուգարանների և աղբամանների տեղադրում	• Հեռահաղորդակցության արդի համակարգերի, բանկոմատների, բնական գազի, կոյուղու, աղբամանների և հանրային զուգարանների բացակայությունը լուրջ խոչընդոտ կարող է հանդիսանալ համայնքում իրականացվելիք ծրագրերի արդյունքում հնարավոր զարգացումների և մարդկային հոսքերի սպասարկման գործում,

	Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր	Հնարավորություններ	Սպառնալիքներ
Սոցիալ-տնտեսական վիճակն ու զբաղվածությունն	• Արենիի գինու գործարանը ապահովում է զգալի թվով աշխատատեղեր • Տնային տնտեսությունների մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ	• Զբաղվածության անբավարար մակարդակ • Ցածր աշխատավարձ	• Զբոսաշրջության և գինեգործության զարգացմանը զուգահեռ կստեղծվեն ոլորտներին ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվող աշխատատեղեր,	• Զբաղվածության անբավարար մակարդակը, համայնքում երիտասարդ որակյալ կադրերի պահանջարկի պակասը և ցածր աշխատավարձը կնպաստեն արտագաղթին և գյուղի ծերացմանը
Գյուղատնտեսություն	• գյուղատնտեսական նշանակության հողեր 204 հա • խաղողի այգիներ 150 հա • տնային տնեսությունների մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ	• գյուղատնտեսության մեխանիզացիայի անբավարար աստիճան • գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների ոչ բարվոք վիճակ • գյուղատնտեսական արտադրանքի սպառման դժվարություններ	• գյուղատնտեսության մեխանիզացիա • գյուղմթերքների արտադրման ծավալների ավելացում • գյուղատնտեսական զբոսաշրջության զարգացում	• կլիմայական փոփոխություններ, անբարենպաստ կլիմա • համայնքի բնակչության թերահավատություն գյուղատնտեսական գործունեության շահավետության նկտմամբ
Զբոսաշրջային ռեսուրսներ	• Նորավանքի վանական համալիր և սբ. Աստվածածին եկեղեցի • հին գյուղատեղի • խաչքարեր • դամբարաններ • քարայրեր • աշխարհում երբևէ հայտնաբերված ամենահին կոշիկը, կանացի հագուստը և գինու հնձանը • գեղատեսիլ բնություն • գրավիչ և հետաքրքրական բուսական և կենդանական նմուշներ	• կլիմայական պայմանների և զբոսաշրջային հոսքերի նկատմամբ ռեսուրսների զգայունություն և խոցելիություն • ռեսուրսների հանրաճանաչման և առևտրայնացման ցածր մակարդակ	• ռեսուրսների ներգրավում զբոսաշրջային երթուղիներում, • ռեսուրսների արդյունավետ կառավարում, • այլընտրանքային զբոսաշրջային ձևերի զարգացում և նոր զբոսաշրջային արդյունքների ձևավորում և իրացում	• ռեսուրսների կառավարման սխալ մոդելները կամ ռեսուսների մատնումն անուշադրության կհանգեցնեն դրանց ոչնչացմանը

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Զբոսաշրջության զարգացման ծրագիր

Արենի համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ բազմաթիվ ռեսուրսներ և չօգտագործվող ահռելի ներուժ: Գյուղը շրջապատող հիասքանչ բնաշխարհը Արփա գետի հովտով, կիրճերով, ժայռերով և քարանձավներով, շրջակայքի հարուստ պատմա-մշակութային մթնոլորտը և մշակութային ոչ նյութական հարուստ ժառանգությունը, գինեգործության հազարամյա ավանդույթները և հայկական ավանդական հյուրընկալությունը համայնքի համար ստեղծում են նախադրյալներ՝ հաջող պլանավորման և ծրագրերի կազմակերպված իրականացման դեպքում դառնալու հանրապետության և տարածաշրջանի լավագույն և ամենագրավիչ զբոսաշրջային կենտրոններից մեկը: Չնայած այն հանգամանքին, որ Արենի գյուղը հանրապետությունում, տարածաշրջանում և որոշ չափով նաև արտերկրում առավել ճանաչված է որպես գինեգործության ավանդույթներով հարուստ գինու զբոսաշրջության ուղղություն, համայնքն ունի նաև էկոզբոսաշրջության, գյուղական զբոսաշրջության և արկածային զբոսաշրջության զարգացման նախադրյալներ ի դեմս համայնքը շրջապատող բնությունում առկա բուսական և կենդանական հետաքրքիր նմուշների, քարանձավների, ժայռերի, լեռնային հեծանվավազքի և արշավների համար գրավիչ բնության, գյուղական հանդարտ միջավայրի և այլն:

Այնուամենայնիվ, խաղողի և գինու զբոսաշրջությունը Արենիում մնում է զարգացման ենթակա ամենանպատակային և արդիական զբոսաշրջության ձևը: Զբոսաշրջության նկարագրված մյուս այլընտրանքները կարող են հաջողությամբ համադրվել գինու զբոսաշրջության հետ՝ կազմելով գրավիչ կոմբինացված արդյունքներ:

Ստորև ներկայացվում են Արենի համայնքում զբոսաշրջության և մասնավորապես զարգացման ծրագրի նպատակները, առկա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված առաջարկվող միջոցառումները: Ծրագրի նախատեսված տևողությունն է 3 տարի, մեկնարկը՝ 2012թ. երկրորդ եռամսյակում: Ծրագրի իրականացման համար նախնական տվյալներով կպահանջվի 120 000 հազար ՀՀ դրամ:

Նպատակներ

Արենի համայնքում զբոսաշրջության զարգացման ծրագրի հիմնական նպատակն է համայնքը դարձնել միջազգային չափանիշներին համապատասխանող ծառայություններ մատուցող տարվա բոլոր եղանակներին գործող խաղողի և գինու զբոսաշրջային կենտրոն՝ գյուղական, պատմա-մշակութային, արկածային և էկոզբոսաշրջության տարրերի համադրությամբ:

Ծրագրի նպատակներն են.

- զարգացնել համայնքում առաջարկվող զբոսաշրջային ծառայությունների և զբոսաշրջային արդյունքների որակն ու բազմազանությունը,
- խթանել համայնքում զբոսաշրջային հոսքերի ավելացումը և զբոսաշրջային գիշերակացերի ավելացումը,
- նպաստել զբոսաշրջությունից ուղղակիորեն և անուղղակիորեն ստացվող եկամուտների աճին,
- զբոսաշրջության, սպասարկման և հարակից բնագավառներում նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով համայնքում զարգացնել սոցիալ-տնտեսական վիճակը,
- զբոսաշրջության միջոցով համայնքում զարգացնել ավանդույթները և խթանել մշակութային կյանքը:

Խնդիրներ

Արենի համայնքում զբոսաշրջության զարգացման ծրագրի հիմնական խնդիրներն են.

- Զարգացնել զբոսաշրջության ոլորտը սպասարկող ենթակառուցվածքները (ճանապարհային, հեռահաղորդակցության, կենցաղային սպասարկման, և այլն),
- Խթանել ավանդական գյուղական գրավիչ միջավայրի պահպանումն ու զարգացումը,
- Ապահովել Արենիի, որպես կազմակերպված հանգստի կենտրոնի արդյունավետ կառավարումը,
- Ապահովել Արենիի, որպես գյուղական, պատմա-մշակութային, արկածային և էկոզբոսաշրջության տարրերի համադրությամբ խաղողի

և գինու զբոսաշրջության կենտրոնի նկարագրի ձևավորումն ու արդյունավետ խթանումը,
- Ապահովել զբոսաշրջիկներին տրամադրվող տեղեկատվության հասանելիությունը,
- Ոլորտն ապահովել օտար լեզուների տիրապետող որակավորված մարդկային ռեսուրսներով,
- Ապահովել զբոսաշրջության կայուն զարգացում՝ զբոսաշրջային հոսքերի վերացման պայմաններում:

Միջոցառումներ

Արենի համայնքում զբոսաշրջության զարգացման ծրագրով նախատեսված նպատակների իրականացման և խնդիրների լուծման ուղությամբ առաջարկվում են հետևյալ կարճաժամկետ և միջնաժամկետ միջոցառումները:

	Միջոցառում	Ակնկալվող արդյունք
1.	Համայնքի ավտոճանապարհների բարեկարգում և կահավորում	Համայնքն ունի բարեկարգված, ասֆալտապատ կամ խճապատ ավտոճանապարհներ՝ մայթերով: Ավտոճանապարհները կահավորված են ճանապարհային նշաններով և դեպի զբոսաշրջային գրավչության օբյեկտներ, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, սննդի կազմակերպման օբյեկտներ և զբոսաշրջային հետաքրքրության այլ վայրեր և հաստատություններ ուղղորդող նշաններով՝ հայերեն և անգլերեն լեզուներով:
2.	Համայնքի որոշ հատվածներում հայկական ավանդական գյուղական միջավայրի վերականգնում և զարգացում	Համայնքի ընտրված հատվածներում (Երևան – Մեղրի մայրուղուն հարող կենտրոնական հատված, ավանդական ուտեստների և տնական արտադրության գինու վաճառքի հարթակ, գրավիչ տեսարանով հատվածներ, և այլն) վերականգնված հայկական ավանդական գյուղական միջավայր:

3.	Համայնքի կենտրոնում Երևան-Մեղրի մայրուղուն հարող գինու, ավանդական ուտեստների, քաղցրավենիքի և հուշանվերների վաճառասեղանների համապատասխանեցում շրջապատող պատմամշակութային, բնական և ճարտարապետական միջավայրին	Գինին, ավանդական ուտեստները, քաղցրավենիքը, չոր միրգը և հուշանվերները վաճառվում են գրավիչ, շրջապատող պատմամշակութային, բնական և ճարտարապետական միջավայրին հարիր վաճառասեղանների վրա:
4.	Հեծանվային և հետիոտն երթուղիների մշակում և սպասարկում:	Մշակված մի քանի հեծանվային և հետիոտն երթուղիներ, որոնք ներառում են զբոսաշրջային գրավչության պատմամշակութային և բնական օբյեկտներ: Երթուղիներն ապահովված են ուղղորդիչ և կողմնորոշիչ նշաններով և անվճար տրամադրվող քարտեզներով: Երթուղում ընդգրկված գրավչության օբյեկտները համառոտ նկարագրով և մի քանի նկարներով ցուցանշված են նաև Bing և Google համակարգի թվային քարտեզներում:
5.	Զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնի հիմնում և գործարկում	Համայնքում գործում է զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոն, որտեղ համայնք այցելած զբոսաշրջիկներին և այցելուներին տրամադրվում է համայնքում և հարակից շրջաններում զբոսաշրջային գրավչության օբյեկտների վերաբերյալ անվճար տեղեկատվություն հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով, ինչպես նաև տրամադրվում է վճարովի ծառայություններ (տուրերի և անիմացիոն ծրագրերի

		պատվերներ, մշակութային միջոցառումների կազմակերպում, արշավների և հեծանվավազքի համար անհրաժեշտ գույքի վարձակալում, հեռահաղորդակցության միջոցներով ապահովում, հուշանվերների վաճառք, գիշերակացի և սննդի կազմակերպման ծառայությունների ամրագրում և այլն):
6.	Զբոսաշրջային տեղեկատվական նյութերի տպագրում և տարածում	Զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնը տրամադրում է անվճար տպագիր նյութեր համայնքում և հարակից շրջաններում զբոսաշրջային գրավչության օբյեկտների, իրականացվող մշակութային միջոցառումների և այլնի վերաբերյալ:
7.	Համայնքի՝ որպես գրավիչ զբոսաշրջային ուղղության նկարագրի ձևավորում և խթանում	Համայնքն ունի ձևավորված զբոսաշրջային նկարագիր՝ որպես գյուղական, պատմա-մշակութային, արկածային և էկոզբոսաշրջության տարրերի համադրությամբ խաղողի և գինու զբոսաշրջության գրավիչ կենտրոն: Համայնքը և պարբերաբար թարմացվող զբոսաշրջային արդյունքները շարունակ խթանվում են մարքեթինգային տարբեր միջոցներով (տեղական, տարածաշրջանային և միջազգային մասնագիտացված ցուցահանդեսներ, տպագիր նյութեր, հեռուստաթեր, համացանց)
8.	Համայնքում զբոսաշրջության հիմնադրամի և ասոցիացիայի հիմնում	Համայնքում գործում է զբոսաշրջության բնագավառում գործունեություն իրականացնող անձանց, ուսանողների և կամավորների միություն, որը համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմնի և համայնքի բնակիչների հետ՝ զբոսաշրջության

		զարգացման ծրագրի իրականացման և զարգացման շարունակականության ապահովման գործում:
9.	Համայնքում արհեստակցական միությունների հիմնում	Համայնքում գործում են արհեստակցական (գինեգործների, հրուշակագործների, բրուտագործների, և այլն) միություններ: Միություններն ապահովում են գինու, ավանդական քաղցրավենիքի, ուտեստների, հուշանվերների գործարանային և տնային արտադրության, փաթեթավորման և իրացման արդյունավետ մեխանիզմների մշակում և կիրառում: Գինու, ավանդական ուտեստների և հուշանվերների հարթակում գրավիչ հայկական ավանդական ճարտարապետությանը հարիր վաճառասեղանների վրա վաճառվում է գեղագիտորեն փաթեթավորված տնական արտադրության գինի, քաղցրավենիք, չոր մրգեր, ուտեստներ, հուշանվերներ և այլն:
10.	Զբոսաշրջության և սպասարկման ուսումնական կենտրոնի հիմնում և գործարկում	Զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոնին կից կամ համայնքի մշակույթի տանը կից գործում է զբոսաշրջության և սպասարկման ուսումնական կենտրոն, որտեղ սպասարկման բնագավառում նոր կադրերի (զբոսավարներ, ուղեկցորդներ, տեղեկատվական կենտրոնի ադմինիստրատորներ, խոհարարներ, մատուցողներ) պատրաստումից զատ, վերապատրաստվում են նաև համայնքի զբոսաշրջության և սպասարկման ոլորտի մարդկային ռեսուրսները:
11.	Հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացում և ընդլայնում	Համայնքի զբոսաշրջությանն առնչվող օբյեկտներն ու հաստատությունները (գյուղապետարան, զբոսաշրջիկների

		տեղեկատվական կենտրոն, սպասարկման ուսումնական կենտրոն, զբոսաշրջային տներ, սննդի կազմակերպման օբյեկտներ, մշակույթի տուն) ապահովված են բարձրորակ հեռախոսակապով և ինտերնետ կապով:
12.	Էլեկտրոնային վճարային համակարգերի ներդնում	Համայնքի զբոսաշրջությանն առնչվող օբյեկտները (զբոսաշրջիկների տեղեկատվական կենտրոն, սննդի կազմակերպման օբյեկտներ) ընդունում են անկանխիկ վճարումներ կրեդիտ քարտերով: Համայնքի ամենաբանուկ զբոսաշրջային հատվածներում կա առնվազն 2 բանկոմատ:

Միջոցառումների նշված հերթականությունը չի ենթադրում դասավորություն ըստ գերակայության կամ իրականացման ժամանակացույցի: Յուրաքանչյուր միջոցառում կիրականցվի ըստ մյուս միջոցառումների հետ փոխկապակցվածության, և համապատասխան ֆինանսավորման ժամկետներում:

Գինեգործության զարգացման ծրագիր

Արենի համայնքի տարածքում գինեգործության ավանդույթները սկիզբ են առել նախապատմական ժամանակներում: 2010թ. համայնքից ոչ հեռու գտնվող Թռչունների (Արենի 1) քարանձավում իրականացվող պեղումների արդյունքում հայտաբերված գինու հնձանը ճզմած խաղողի կորիզներով աշխարհի հնագետներին թույլ տվեց հայտարարել աշխարհում երբևէ գտնված գինեգործության ամենահին վկայության մասին:

Գինեգործության ավանդույթների հարուստ պատմության, խաղողի այգիների առատության և խաղողի աճեցման համար բարենպաստ կլիմայի նման պայմաններում Արենի համայնքը կարող է դառնալ գինեգործության ոլորտում առաջատար ոչ միայն հանրապետությունում, այլև դրա սահմաններից դուրս:

Այնուամենայնի, ներկայումս գինեգործության բնագավառում համայնքը գտնվում է ուժեղ մրցակցության մեջ մարզի, հանրապետության և տարածաշրջանի մասշտաբներով: Մրցակցության գործընթացում հաջողությունների ձեռքբերումը հնարավոր է խաղողագործության, խաղողի մթերման, գինու արտադրության, փաթեթավորման, արտադրանքի խթանման և իրացման գործընթացների հաջող պլանավորման և իրականացման շնորհիվ՝ նշված գործընթացների տարբեր փուլերում ներգրավելով այլընտրանքային նորարարական մեխանիզմներ:

Արենի համայնքում գինեգործության զարգացման ծրագրում ներկայացվում է համայնքում խաղողագործության, խաղողի մթերման, գինու արտադրության, փաթեթավորման, արտադրանքի խթանման և իրացման հիմնական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված միջոցառումների ցանկը: Ծրագրի նախատեսված տևողությունն է 2 տարի, մեկնարկը՝ 2012թ. երրորդ եռամսյակում: Ծրագրի իրականացման համար նախնական տվյալներով կպահանջվի 97 000 հազար ՀՀ դրամ:

Նպատակներ

Արենի համայնքում գինեգործության զարգացման ծրագրի հիմնական նպատակն է խաղողագործության և գինեգործության զարգացման միջոցով Արենին դարձնել տարածաշրջանում և միջազգային շուկայում հայտնի գինեգործության կենտրոն:

Ծրագրի նպատակներն են.

- խաղողագործության և գինեգործության զարգացման միջոցով աջակցել նոր աշխատատեղերի ստեղծմանը և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը,
- համայնքում խթանել փոքր և միջին ձեռնարկությունների և ձեռնարկատիրության զարգացումը,
- զբոսաշրջության հետ խաղողագործության և գինեգործության համադրության միջոցով ստեղծել նոր արդյունքներ, արտադրանքի խթանման և իրացման նոր ուղիներ և եկամտի նոր աղբյուրներ,
- նպաստել Արենի գինու բրենդի պահպանմանը, զարգացմանն ու մրցունակության բարձրացմանը:

Խնդիրներ

Արենի համայնքում գինեգործության զարգացման ծրագրի հիմնական խնդիրներն են.

- Զարգացնել գինեգործությունն ու մեծացնել գինու արտադրության ծավալները և արտադրատեսակների քանակը,
- Բարձրացնել համայնքում արտադրվող գինեգործական արտադրանքի մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում,
- Ապահովել Արենի գինու բրենդի շարունակական զարգացումը և պատշաճ դիրքավորումը միջազգային շուկայում,
- նորարարական մեթոդներով զբոսաշրջության հետ խաղողագործության և գինու արտադրության համադրման միջոցով ստեղծել զբոսաշրջային նոր արդյունքներ և եկամտի նոր աղբյուր՝ միաժամանակ խթանելով արտադրանքի իրացումը,
- հիմնել փոխշահավետ կայուն համագործակցություն գինեգործության, զբոսաշրջության, արհեստագործության և սպասարկման բնագավառներում տնտեսվարող սուբյեկտների միջև՝ ի նպաստ համընդհանուր սոցիալական բարգավաճման:

Միջոցառումներ

	Միջոցառում	Ակնկալվող արդյունք
1.	"Արենի" բրենդի շարունակական զարգացում և դիրքավորում ներքին և միջազգային շուկայում: Նոր բրենդերի մշակում և ներմուծում:	Հայկական գինու "Արենի" բրենդը գբաղեցնում է իր ուրույն մրցունակ դիրքը միջազգային շուկայում: Բրենդի շարունակական զարգացման շնորհիվ տարեցտարի ավելանում է արտադրության և արտահանման ծավալները: Գինու նոր բրենդերի մշակումը և ներմուծումը կխթանի արտադրատեսակների դիվերսիֆիկացիան ու համայնքի՝ որպես գինեգործության ճանաչված կենտրոնի նկարագրի ձևավորումը:
2.	Գինու արդյունաբերության արտադրամասերում որակի համակարգերի ներդրում և որակի շարունակական և հետևողական կառավարում:	Գինու արտադրության ձեռնարկություններում ներդրված և հետևողականորեն կառավարվող որակի համակարգերը կխթանեն արտադրանքի նկատմամբ պահանջարկը, ինչպես նաև կդյուրացնեն արտադրանքի արտահանումն ու իրացումը:
3.	Տնային արտադրության գինու արտադրական պայմանների և փաթեթավորման համապատասխանեցում սահմանված սանիտարական նորմերին: Փաթեթավորման և վաճառքի գեղագիտական որակի բարելավում:	Տնային արտադրության գինիները պատրաստված են սանիտարական սահմանված նորմերին համապատասխանող պայմաններում, շշալցված են չօգտագործված մեկանգամյա օգտագործման պլաստմասսե տարաներում կամ գյուղի արհեստավորների պատրաստած ապակե կամ կավե տարաներում: Գինիների վաճառքը կազմակերպվում է տանը՝ ավանդական կահավորված գեղեցիկ սրահներում կամ բացօթյա՝ գրավիչ, հայկական ավանդական

		ճարտարապետությանը հարիր վաճառասեղանների վրա:
4.	Գինու արտադրամասերում և շահագրգիռ տնային տնտեսություններում գինու համտեսի և վաճառքի սրահի կազմակերպում:	Գինու արտադրամասերը և շահագրգիռ տնային տնտեսություններն ունեն առանձնացված սրահներ՝ ձևավորված և կահավորված՝ հայկական ավանդական ոճով, կահավորված գինու արտադրությանը վերաբերող իրերով, աուդիո և վիդեո տեխնիկայով և տպագիր նյութերով, որտեղ կարող են կազմակերպվել զբոսաշրջիկների ընդունելություն, գինու համտես և վաճառք, զբոսաշրջիկներին կարող են ներկայացվել գինու արտադրության փուլերը, տվյալ տնտեսության հետաքրքիր պատմությունը և այլ հետաքրքրաշարժ նյութեր:
5.	Գինու արտադրամասերին և շահագրգիռ տնային տնտեսություններին, ճանապարհներին և զբոսաշրջային բանուկ վայրերին հարող խաղողի այգիների հատվածների խնամում և գրավչության բարձրացում՝ զբոսաշրջային խմբերի համար էքսկուրսիաներ կազմակերպելու նպատակով:	Գինու արտադրամասերը և շահագրգիռ տնային տնտեսությունները ընդունելությունների սրահից զատ զբոսաշրջային էքսկուրսիաների կազմկարպման համար ունեն նաև խնամված ցուցադրական հատվածներ իրենց պատկանող խաղողի այգիներում՝ կահավորված խաղողի տեսակի անգլերեն ու լատիներեն անվամբ և տվյալ տեսակից ստացվող գինիների անուններով գեղեցիկ ցուցատախտակներով, հողի մշակման, խաղողի էման և բերքահավաքի ցուցադրական գույքով:
6.	Գինեգործության թանգարանի հիմնում	Տեղի խաղողագործության և գինեգործության հարուստ ավանդույթների, պատմության և առկա նմուշների հիման վրա ստեղծված

		գինեգործության թանգարան, որտեղ ներկայացվում են գինեգործությանն ու խաղողագործությանն առնչվող հետաքրքիր նմուշներ և նյութեր:
7.	Գինու արտադրության պրոցեսների անիմացիոն ծրագրերի մշակում և իրականացում	Գինու արտադրության ավանդական պրոցեսները ներկայացնող գեղեցիկ անիմացիոն ծրագրեր, որոնք իրականացվում են զբոսաշրջային օպերատորների կամ զբոսաշրջիկների նախնական պատվերով, խաղողի այգիներում, գինու արտադրամասերում և տնային տնտեսություններում, համայնքի երիտասարդների կողմից՝ առավել պատկերավոր նկարագրելու համար տեղի գինեգործության ավանդույթները:
8.	Գինու ամենամյա փառատոնի արդյունավետ խթանում և կազմակերպում	Համայնքում ամեն տարի կազմակերպվում է գինու ավանդական փառատոնը, որն ուղեկցվում է անիմացիոն ինտերակտիվ ծրագրերով, գինու համտեսով, տարաբնույթ մրցույթներով և մշակութային միջոցառումներով: Փառատոնն անցկացումից առաջ գովազդվում է հնարավոր բոլոր միջոցներով՝ ապահովելու համար մասնակցության բարձր աստիճան, իսկ հետո՝ լայնորեն լուսաբանվում տեղական և արտասահմանյան լրատվամիջոցներով՝ հնարավորինս լայն ճանաչում ապահովելու նպատակով:

Միջոցառումների նշված հերթականությունը չի ենթադրում դասավորություն ըստ գերակայության կամ իրականացման ժամանակացույցի: Յուրաքանչյուր միջոցառում կիրականցվի ըստ մյուս միջոցառումների հետ փոխկապակցվածության, և համապատասխան ֆինանսավորման ժամկետներում:

Զբոսաշրջային տների զարգացման ծրագիր

Արենի համայնքը ներքին և միջազգային զբոսաշրջային շուկաներում տարեցտարի ամրապնդում է իր դիրքը որպես գրավիչ զբոսաշրջավայր: Համայնքի զարգացմանը և հանրաճանաչմանը զուգահեռ համայնքում ակնկալվում է զբոսաշրջային հոսքերի կտրուկ աճ, իսկ համայքում իրականացվելիք զբոսաշրջության զարգացման և գինեգործության զարգացման ծրագրերի արդյունքում ձևավորվող նոր զբոսաշրջային գրավչության օբյեկտները, ծառայություններն ու արդյունքները կխթանեն համայնքում գիշերակացերի քանակի աճը: Զարգացման նման տեմպերում արդիական կդառնա համայնքը հյուրանոցային տնտեսության օբյեկտներով ապահովելու խնդիրը: Գյուղական միջավայրում ամենագրավիչ, տնտեսապես ամենաարդյունավետ և ամենամեծ պահանջարկ վայելող հյուրանոցային տնտեսության օբյեկտները զբոսաշրջային տներն են: Գյուղ այցելած զբոսաշրջիկներն ակնկալում են գիշերակաց տեղի ավանդական գյուղական տանը և նախաճաշ տեղի արտադրության էկոլոգիապես մաքուր գյուղմթերքներով:

Զբոսաշրջային տների տնտեսական բարձր արդյունավետությունը պայմանավորված է հիմնականում նրանով, որ զբոսաշրջային տների "հիմնումը" և շահագործումը չի պահանջում այնպիսի խոշոր կապիտալ ներդրումներ և ընթացիկ ծախսեր, ինչպիսիք պահանջվում են այլ հյուրանոցային տնտեսության օբյեկտների հիմնման և շահագործման համար:

Զբոսաշրջային տների զարգացումը գյուղական համայքներում հանդիսանում են նաև լուրջ խթան համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման և մշակութային կյանքի ակտիվացման համար: Նման հաստատություններում սպառվող գյուղմթերքը և այլ արտադրանքը (գինի, քաղցրեղեն, հոտավետ թեյեր, չոր մրգեր, հուշանվերներ, ավանդական կահավորանք և սպասք) հիմնականում արտադրվում է հենց զբոսարջային տունը շահագործող տնային տնտեսությունում կամ գնվում են հարևան տնտեսություններից՝ այսպիսով վերջիններիս համար ապահովելով եկամտի հավելյալ աղբյուրներ:

Ստորև ներկայացվում է Արենի համայնքում զբոսաշրջային տների զարգացման ծրագրի նպատակները, խնդիրները և միջոցառումները: Ծրագրի նախատեսված տևողությունն է 4 տարի, մեկնարկը՝ 2012թ. երկրորդ

համայնքում: Ծրագրի իրականացման համար նախնական տվյալներով կպահանջվի 245 000 հազար ՀՀ դրամ:

Նպատակներ

Արենի համայնքում զբոսաշրջային տների զարգացման ծրագրի հիմնական նպատակն է համայնքում զբոսաշրջային տների զարգացման միջոցով համայնքն ապահովել հյուրանոցային տնտեսության օբյեկտներով, իսկ համայնքի բնակչության համար ստեղծել եկամտի հավելյալ աղբյուրներ՝ բարելավելով համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը:

Ծրագրի նպատակներն են.

- համայնքում զբոսաշրջային գիշերակացերի քանակի ավելացման նպատակով համայքն ապահովել հյուրանոցային տնտեսության օբյեկտներով,
- բարելավել հյուրանոցային ծառայությունների որակը՝ համայնքում հիմնելով և զարգացնել հայկական ավանդական ձևավորմամբ և կահավորանքով զբոսաշրջային տների ցանց,
- նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանն ու մշակութային կյանքի ակտիվացմանը:

Խնդիրներ

Արենի համայնքում զբոսաշրջային տների զարգացման ծրագրի հիմնական խնդիրներն են.

- խթանել զբոսաշրջային տների հիմնումն ու շահագործումը շահագրգիռ տնային տնտեսություններում,
- ձևավորել համայնքի զբոսաշրջային տների ցանց և ինտեգրել այն հայկական և միջազգային շուկայում,
- ապահովել զբոսաշրջային տների բակերի, տնամերձ այգիների և ինտերիերի հայկական ավանդական գյուղական ձևավորումն ու կահավորումը,
- զբոսաշրջային տներում ապահովել անհրաժեշտ տարրական սանիտարական պայմաններ,
- ապահովել սերտ և արդյունավետ համագործակցություն զբոսաշրջային տների, գինեգործական ընկերությունների, գյուղատնտեսական ընկերությունների, զբոսաշրջային ծառայություններ մատուցող

օբյեկտների, համայնքի արհեստավորների, մանկապատանեկան ու երիտասարդական մշակութային խմբակների և ուսանողների միջև:

Միջոցառումներ

	Միջոցառում	Ակնկալվող արդյունք
1.	Համայնքում զբոսաշրջային տների հիմնման ու շահագործման խրախուսում	Սեմինարների և հանրային իրազեկման այլ միջոցների օգնությամբ համայնքի բնակչության մոտ ձևավորվել է հստակ պատկերացում զբոսաշրջային տների շահագործման տնտեսական արդյունավետության մասին: Տնային տնտեսությունների մոտ բարձրանում է զբոսաշրջային գործունեության մեջ ներգրավվելու և զբոսաշրջային տներ հիմնելու և շահագործելու շահագրգռվածությունը:
2.	Զբոսաշրջային տների բակերի, տնամերձ այգիների և ինտերիերի հայկական ավանդական գյուղական միջավայրի վերականգնումը	Զբոսաշրջային տների բակերի, այգիների և ինտերիերի հյուրերի համար նախատեսված հատվածների ձևավորումն ու կահավորանքը արտացոլում են հայկական ավանդական գյուղական միջավայրն ու կենցաղը՝ այցելուների և զբոսաշրջիկների համար ապահովելով անկրկնելի գրավիչ հանգիստ և կեցություն:
3.	Զբոսաշրջային տներում սանիտարական տարրական նորմերի պահմանման ապահովում	Զբոսաշրջային տներում պահպանվուն են սանիտարական տարրական նորմերը: Կոյուղու առկայության դեպքում զբոսաշրջային տներն ունեն հյուրերի համար առանձնացված զուգարաններ և լոգարաններ, իսկ կոյուղու բացակայության դեպքում՝ գյուղական փայտե էկոզուգարաններ և լոգարաններ: Փայտե էկոզուգարանները մշտապես գտնվում են մաքուր և օդափոխված վիճակում:

		Մատուցվող անունդը պատրաստվում է ներկայանալի տեսքով, մաքուր խոհանոցում:
4.	Զբոսաշրջային տները հեռահաղորդակցության միջոցներով ապահովում	Զբոսաշրջային տներում կա որակյալ միջազգային հեռախոսակապ, ինտերնետ կապ և արբանյակային հեռուստատեսություն:
5.	Զբոսաշրջային տների ասոցիացիայի հիմնում	Համայնքում գործում է զբոսաշրջային տների ասոցիացիա կամ միություն, որն իրականացնում է ձեռնարկատիրության այս ոլորտի առջև ծառացած խնդիրների բացահայտում, դրանց լուծմանն ուղղված միջոցների ձեռնարկում, միասնական շահերի պաշտպանություն տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների և գերատեսչությունների հետ հարաբերություններում:
6.	Զբոսաշրջային տների ցանցի ձևավորում, ցանցի ինտեգրում հյուրանոցային տնտեսության օբյեկտների ամրագրումների հայկական և միջազգային համակարգերում և թվային քարտեզներում	Հյուրանոցային ծառայությունների ամրագրման հայկական և միջազգային համակարգերում առկա են համայնքում գործող զբոսաշրջային տները: Հայկական և միջազգային այնպիսի համակարգերում, ինչպիսիք են armhotels.am, hotels.am, booking.com, expedia.com առցանց ամրագրումներից զատ կարելի է կատարել առցանց վճարում գնվող ծառայությունների դիմաց: Համայնքի զբոսաշրջային տները կոնտակտային տվյալներով և ամրագրման կայքերի հասցեների հղումներով հանդերձ ցուցանշված են Bing և Google համակարգի թվային քարտեզներում:
7.	Զբոսաշրջային տների ցանցի միասնական մարքեթինգային	Զբոսաշրջային տների ձևավորված ցանցն իրականացնում է միասնական մարքեթինգ՝ ապահովելով մարքեթինգային

	ծրագրերի իրականացում	ծախսերի նվազեցում և միջոցառումների արդյունավետություն: Մարքեթինգ իրականացվում է ցուցահանդեսներին մասնակցության, տպագիր նյութերի հրատարակման և տարածման, համացանցում և մասնավորապես սոցիալական ցանցերում ու զբոսաշրջային ուղղվածության կայքերում ուղղակի գովազդի, ինչպես նաև այլ արդյունավետ միջոցներով:
8.	Զբոսաշրջային տների և գինեգործական տնտեսությունների, գյուղատնտեսական ձեռնարկությունների, համայնքի արհեստավորների, հարևան տնային տնտեսությունների, ուսանողների և հայկական զբոսաշրջային օպերատորների միջև արդյունավետ համագործակցության ապահովում	Համայնքի գինեգործական տնտեսությունները, գյուղատնտեսական ձեռնարկությունները և հարևան տնային տնտեսությունները համագործակցում են զբոսաշրջային տների հետ՝ անհրաժեշտ գյուղմթերքի, սննդամթերքի և գինու մատակարարման, իսկ արհեստավորները՝ հայկական ավանդական կահավորանքի և ապաստի մատակարարման գործում: Զբոսաշրջության և սպասարկման ուսումնական կենտրոնի ուսանողներն իրենց պրակտիկայի մի մասն անցնում են զբոսաշրջային տներում՝ օգնելով զբոսաշրջային տներ շահագործող անձանց իրականացնելու որակյալ սպասարկում: Զբոսաշրջային տները ակտիվորեն համագործակցում են նաև հայկական զբոսաշրջային օպերատորների հետ:

Միջոցառումների նշված հերթականությունը չի ենթադրում դասավորություն ըստ գերակայության կամ իրականացման ժամանակացույցի: Յուրաքանչյուր միջոցառում կիրականցվի ըստ մյուս միջոցառումների հետ փոխկապակցվածության, և համապատասխան ֆինանսավորման ժամկետներում: